



Մեթոդը վերցված է` Lance G. King, MYP ATL skills workbook, 2016

## **Թարգմանեց՝ Ազնիվ Սահակյանը**

Արմավիրի Ռ. Եղոյանի անվան N1 ավագ դպրոցի անգլերենի ուսուցչուհի

### **Քննադատական մտածողության զարգացում**

#### **Դիտարկում**

8 ա) Խնդիրները ճանաչելու համար զգուշությամբ կիրառել դիտարկումը:

#### **Վարպետություն**

**Դուք դասավանդման և ուսումնառության մոտեցումների օգտագործման գիտակ կլինենք, եթե կարողանաք հեշտությամբ և ինքնուրույն տարանջատել դիտարկումները եզրակացություններից և կարողանաք որևէ խնդիր ճանաչելու համար միայնակ օգտագործել դիտարկումները:**

Օգտագործելով մեր 5 զգայարանները՝ **դիտարկման** արդյունքում փաստեր են ձեռք բերվում ուղղակիորեն կամ գործիքների օգնությամբ, որոնք բարելավում են դիտարկման որակը կամ մեծացնում մեր զգայարանների ուժը: Օրինակ՝ իրերն ավելի մեծացնելու համար խոշորացույցի օգտագործումը *որակական ընդլայնումն* է. այն բարելավում է առարկայի դիտարկման որակը: Առարկան կշեղելու համար կշեռքի օգտագործումը *քանակական ընդլայնումն* է. այն մեզ ավելի շատ տեղեկություն է տալիս քանակի վերաբերյալ:



**Եզրակացությունը** փաստից ձևավորված ենթադրությունն է, բացատրությունը կամ դատողությունը: Կա եզրակացության 2 տեսակ՝ *ինդուկտիվ եզրակացություն*, որը ներառում է գոյություն ունեցող փաստից ձևավորված սկզբունք, և *դեդուկտիվ եզրակացություն*՝ նախկինում գոյություն ունեցող սկզբունքի վրա հիմնված դասակարգման կամ մեկնաբանման փաստ, ոստի՝ այն ներառում է փորձառության վրա հիմնված գիտելիքը: Եզրակացության այս 2 տեսակներն էլ կարևոր են հետազոտության մեջ:

---

### **Դիտարկման և եզրակացության տարբերությունը**

Դիտարկենք/ ուսումնասիրենք/ մատիտը:

Որո՞նք են ձեր դիտարկումները .երկար, բարակ, արտաքինից՝ դեղին, ներսից՝ շագանակագույն, սև կենտրոնով, մի ծայրից՝ սուր, մյուսից՝ բութ:

Որո՞նք են ձեր եզրակացությունները .պատրաստված է փայտից, գրաֆիտից, ներկից, մատիտ անվանումով և օգտագործվում է գծագրման համար:

Վարժություն 1 – Հնարավոր դիտարկումներ

ա) Որո՞նք են իրերի այն դիտարկումները, որոնք կարող եք անել միայն նայելով/տեսողություն/:

Գույն, ձև, չափս .....

բ) Որո՞նք են այն դիտարկումները, որոնք կարող եք անել միայն դիպչելով /շոշափելիք/:

Սուր, կոպիտ, հարթ .....

գ) Ինչպե՞ս կարող եք նկարագրել տարբեր հոտերը: Նշե՛ք հոտը բնութագրող մի քանի բառ /հոտառություն/:

Անուշաբույր, բորբոսնած, սուր .....

դ) Ինչպե՞ս կարող եք նկարագրել տարբեր համերը: Նշե՛ք համը բնութագրող մի քանի բառեր/համի զգացողություն/:

Քաղցր, թթու .....



ե) Ինչպե՞ս կարող եք նկարագրել տարբեր ձայները: Նշե՛ք ձայնը բնութագրող մի քանի բառ /խոդություն/:

Ղողանջող, բարձրացող, հարվածող .....

**Վարժություն 2 – Կույր դիտարկումներ**

ա) Աշխատե՛ք զույգերով: Յուրաքանչյուրը պետք է գտնի մեկ առարկա, որը որ կարող է օգտագործել այս վարժության մեջ, բայց այն չպետք է ցույց տա մյուսին: Այն պետք է լինի շոշափելու հարմար ինչ-որ առարկա՝ ոչ սուր, կեղտոտ կամ զգվելի: Ցանկալի է, որ լինի մի փոքր անսովոր: Կարող լինել կաղին, չորացած տերև, անսովոր գրիչ կամ էլեկտրական սարք:

բ) Դրե՛ք առարկան արկղի մեջ կամ ինչ-որ կտորի տակ, որ տեսանելի չլինի զուգընկերոջը:

գ) Յուրաքանչյուրը շոշափում է առարկան, որը չի տեսել, և գրառում է կատարում իր դիտարկումների մասին՝ նկարագրելով չափսը, ձևը, մակերեսին բնորոշ գծերը, գործվածքի խտությունը և այլն:

Հիշե՛ք՝ «սա կառուցված է...», «սա ինչ-որ բան է » պնդումները դիտարկումներ չեն, այլ եզրակացություններ:

դ) Յուրաքանչյուրը նկարում է դեռևս թաքցված առարկայի պատկերը:

ե) Հետո յուրաքանչյուրն առարկայի վերաբերյալ կատարում է հնարավորինս շատ եզրակացություններ. ի՞նչ գույնի է , որտե՞ղ կարելի է դա գտնել, ինչի՞ համար կարելի է այն օգտագործել և այլն:

զ) Այնուհետև, դուրս հանե՛ք առարկաները, զննե՛ք դրանք և գրի առե՛ք, թե ինչ հատկություններ եք հիմա տեսնում, որոնք հնարավոր չէր նկատել շոշափելիս:

է) Պարզե՛ք, թե ինչքան ճշգրիտ էին ձեր եզրակացությունները:

ը) Ի՞նչ եք սովորել դիտարկումների և եզրակացությունների մասին:

**Վարժություն 3 – Ծաղրանկար**

ա) Աշխատե՛ք զույգերով: Յուրաքանչյուրը պետք է թերթի մեջ գտնի և դուրս հանի ինչ-որ ծաղրանկար, որի իմաստը հասկացել է: Հետո կտրե՛ք կամ թաքցրե՛ք մեկնաբանությունները՝ խոսքերը՝ թողնելով միայն նկարը:

բ) Փոխանակե՛ք ծաղրանկարները: Փակցրե՛ք Ձեր ընկերոջ ընտրած ծաղրանկարը Ձեր էջի վրա և գրե՛ք այն, ինչ նկատում եք, և ըստ Ձեզ՝ ի՞նչ է նկարագրում ծաղրանկարը:

Որո՞նք են Ձեր եզրակացությունները:



**Փակցրե՛ք ծաղրանկար այստեղ:**

<b>Դիտարկումներ</b> (Ի՞նչ եք տեսնում:)	<b>Եզրակացություններ</b> (Ձեր կարծիքով ի՞նչ է տեղի ունենում ծաղրանկարում, ի՞նչ է այն նշանակում, ինչի՞ մասին է:)